



Պ. Պապլենկո

ԿՐԻՍՏ

891.715
Պ-27

ԵՐԵՎԱՆ 1935 ՅԵՐԵՎԱՆ

ՅՅԻ. 715

Պ-27

2011-057

Պ. ՊԱՎԼԵՆԿՈ

Մ Ո Ւ Խ Ա

Ռուս. քարզմ. Ա. ՇԱՀԵԱԹՈՒՆԻ

42173

С № 35423
1926 г. 6 п.
I

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԹԵՐԵՎԱՆ 1935

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագրեց՝ Հ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Սերբագրիչ՝ Սուրեն Թադևոսյան



1536 - 87

Հրատ. 3385, Գլավ. 256, Գառ. 873, Տիրած 30
Պետերատի Տպարան, Յերևան. II գնուելի 4



Ամենից անհոգ շուենն եր նա: Ավելի անհոգ շուեն, քան այդ փոքրիկ շուենը, դժվար թե լիներ: Նա տեր շուեներ և չեք ել ուզում ունենալ: Վոչ-վոք չգլտեր, թե վորտեղ ե նա ապրում: Նրան կարելի չեք հանդիպել ամեն տեղ՝ և՛ նավահանգստում, և՛ գետափում, և՛ սպանդանոցում: Գիշերները շատ հաճախ այդ խելացի և հանդարտ շնիկին տեսնում ելին զբոսավայրում, իսկ առավոտյան նա լաստով գետի մյուս ափն եր անցնում:

Շատ փոքրիկ եր շնիկը, հազիվ կես տարեկան կառվի ձագի չափ: Աչքի չեք ընկնում իր խձուռը, ուրախ գուլներով՝ մեջքը շեկ-կարմիր եր, պոչը սև, թաթերն սպիտակ, իսկ դնչի վրա այդ գուլներից մանրիկ պուտիկներ ուներ, կարծեք պեպեններ լինեցին: Ընդհանրապես շատ ծիծաղելի չեք՝ խիստ արագաշարժ ու անհասկանալի:

Շնիկի կարճ թաթերը հազիվ ելին տանում փոքրիկ ու նիհար իրանը, բայց այնքան շարժուն ելին, վոր կարծեք թե նրանցից ամեն մեկն առանձին եր վազում: Պոչը թագնվում եր յետևի վոտների մեջ ու քսվելով գետնին արգելակի պես դանդաղեցնում եր նրա արագ վազքը:

Նրա նիհար դուռնչը միշտ ինչ-վոր բանով կեղտոտված եր լինում, իսկ ցից ու ամուր կանգնած աղանջները՝ գլխի չափ մեծ ելին և կարծեք իրենը չլինեցին, այլ ուրիշից վերցրած լիներ:

Շնիկը վորոշ ու մշտական անուն չուներ, այլ սիրում եր ամեն մի պատահական կանչ իր անունը համարել և,

հաճախ այդ անունները փոփոխելիս նա կարծեք թե խաղ
եր անում ու զվարճանում այդ խաղով: Նավահանգստի
բանվորները նրան «Տյոտկա» կանչեցին. այդ նրան դուր
չեկավ. խենթի պես վազում էր, հենց վոր լսում էր
«Տյոտկա» անունը: Բայց մի քանի օրից հետո այդ անունը
նրան ձանձրացրեց, և հիմա «Տյոտկա» լսելիս մեղավորի
պես պոչը գետնին էր տալիս, անհանգիստ փոքստում էր
ու կանչին ականջ չէր անում: Մի անգամ չերեխաները
դարոցից վերադառնալիս տեսան՝ ինչպես շնիկը վազում
էր մի ականջը բարձր ցցած, իսկ մյուսը՝ ծալած ու հան-
գիստ դրած գազաթին:

—Տյոտկա, Տյոտկա, ձայն տվին չերեխաները:

Նա նույնիսկ ցուլց չավեց, վոր լսում է:

Յերեխաներն սկսեցին մտաբերել նրա առաջվա բո-
լոր անունները:

—Լաչկա, Ծարիկ, Մունկա, Կլյակա:

—Յերեխի խրացել է,—նկատեց չերեխաներից մեկը:

—Յեկեք տոն գնանք, թո՛ղ վազի իրեն համար:

—Տոն, Տոն:

Շունը կանգ առավ, ապա նստեց ու նայեց շուրջը:

—Տոն, տոն,—կրկնեցին չերեխաները:

Այս բառի վրա շունը վեր թռավ տեղից, վազեց
գետի չերեխաներն ու սկսեց թռչկոտալ նրանց վտտների
շուրջը: Այս «Տոն» անունը նա մի քանի օր պահեց մի-
այն և հետո գրանից ել հրաժարվեց ու ել վոչ մի անուն
չէր ընդունում:

Նա ապրում էր մենակ: Ուրիշ շների ձեռ բարեկա-
մուծյուն չէր անում: Նա շատ թույլ շնիկ էր, բայց և
այնպես նա վստահում էր իր թույլ ուժերին: Քաղաքում
բոլորն էլ սիրում էլին նրան: Նա վոչ-վոքի չէր անհան-
գրստացնում: Իր հաջոցով չէր վախեցնում, չէր կծում,
վոչինչ չէր գողանում, անգամ շուկայից միս չէր փախց-

նում: Բայց ինչպես և վոքտեղ էր տպրում—վոչ-վոք
չգիտեր:

Շատերն էլին ցանկանում նրա տերը դառնալ, ըն-
տերացնել նրան բայց նա չէր չենթարկվում ու քաղա-
քավարի կերպով ծլկվում էր, չէր փորձում էլին նրան
փակել սենյակում, միջանցքում, կամ մի ուրիշ տեղ:

Յեվ անա մի անգամ շնիկի բնավորության մեջ մեծ
փոփոխություն նկատեցին: Շուկայում նա համարյա ել
չէր չերևում, լաստով էլ չէր անցնում, չերեկոներն զբո-
սավայրում թրև չէր գալիս: Կարծում էլին վոր նա ձագուկ-
ներ ունի և նրանց խնամելով է զբաղված: Բայց պարզ-
վեց, վոր այդ կարծիքը սխալ է:

Նրա բնավորության այդ փոփոխություններն սկսվե-
ցին այն օրից, չէր քաղաքում հայտնվեց սահմանապահ
դինվոր Անդրոն Անդրոնովը:

Մաքսանենգները վիրավորել էլին Անդրոնովին
և նա բռնկվում էր այս սահմանամերձ քաղաքի հիվան-
դանոցում ու հանգստանում էր այտեղ: Յերբ նրան
թուլյաարվեց դուրս գալ հիվանդանոցից, նա առաջին
անգամ չեկավ գետափ, նավահանգիստ: Այտեղ առավոտից
մինչև չերեկո հավաքվում էր բազմությունը, չեռում էր
կյանքը՝ ուրախ, աղմկալից աշխատանքը: Անդրոնովը
նստում էր գետափի մոտ չեղած քարերից մեկի վրա ու
ժամերով լուռ նայում էր նավահանգստում ու գետափում
գտնվող նավերին, նավակներին ու լաստերին:

Կլյակասան (այդպես էր շնիկի վերջին անունը)
նույնպես սիրում էր նավահանգիստը: Նա նստում էր
գետափին, հենց ջրի մոտ, շարժում էր իր խոշոր և ու-
րախ ականջները, դուռնչն այս ու այն կողմն էր տանում,
հոտ էր քաշում չերկաթից, կաշվից, պահածոներից և զա-
նազան ուրիշ ապրանքներից: Լեզուն հանած փայլուն
աչքերով նա անչափ հետաքրքրությամբ դիտում էր ձկնորս-
ներին, վորոնք մի կողմ նստած ննջում էլին ձկնորսա-

կան կարթերը ձեռքներին: Այստեղ ահա նա հանդիպեց Անդրոնովին և սիրեց նրան:

Շնիկը վաղուց արդեն նկատել էր Անդրոնովին և ուշադրութուն դարձրել նրա վրա: Սկզբում Անդրոնովը շնիկին դուր չեկավ—այնքան մեծ էր, այնքան հաստ... Մեկ էլ տեսար հանկարծ տրորեց... Յեվ այնպես էլ թքում է, ձայնն էլ բարձր է ու խոպոտ: Բայց Անդրոնովը նստում էր լուռ ու հանգիստ և շնիկը ավա չեր վախենում:— «Հո միտք չունի՞ ինձ բռնելու»,—գուցե այսպես մտածեց շնիկն սկզբում ու սկսեց ուշադրությամբ դիտել նրան: Անդրոնովն իր համար հանգիստ նստած նայում էր, թե ինչպես նավահանգստի բանվորներն ապրանքը փոխադրում էլին նավակներին, լսում էր բանվորների լեզուն ու բազմության աղմուկը. սիրում էր դիտել գետի ու նրանից այն կողմն ընկած դաշտերի վրա փռված լայն լեռնակամարը ու հեռվից հազիվ նկատվող գյուղը: Շնիկը նկատել էր, վոր Անդրոնովը սովորական մարդկանց պես չի պահում իրեն—համարյա չի խոսում, ուրեմն և չի բզբվում այնպես տհաճ ձայնով, ինչպես անում էլին ուրիշ մարդիկ խեղճ շնիկին վախեցնելու համար: Նա ձեռքերը չի թափահարում, վտառներն էլ հանգիստ է պահում:

Անդրոնովը բավական լավ տպավորութուն թողեց շնիկի վրա: Ծանոթութունն սկսվեց նրանով, վոր Կլավասան մոտեցավ ու նստեց ուղիղ նրա դիմացը: Անդրոնովը լուռ էր. «Ինչ գարմանալի մարդ է, վորքան էլ դուրեկան է».. գուցե այս էր մտածում շնիկը: Անդրոնովը շարունակում էր լուռ նայել գետի կողմը, Կլավասան նույնպես: Այսպես անցավ մոտ մեկ ժամ: Անդրոնովը վեր կացավ տեղից ու գնաց դեպի հիվանդանոց:

Յերբ հետևյալ օրն Անդրոնովը լեռնաց գետափին, շնիկը բոլորովին ու պատահաբար նստած էր արդեն հենց նրա քարի մոտ: Առանց նայելու շանը, գուցե նույնիսկ չնկատելով նրան, Անդրոնովը լուռ նայեց ջրին, ունկնդրեց

որվա աղմուկին ու հեռացավ առանց մի խոսք ասելու: Մենակ մնալով՝ Կլավասան անհանգիստ շարժումներ արավ, մի քանի անգամ հուզմունքից հորանջեց.— «Լավ մարդ է, այ լավ մարդ»—կարծեք այսպես էլին ասում շնիկի աչքերը:

Ամենազլխավորն այն էր, վոր Կլավասան իրեն շատ ազատ էր զգում Անդրոնովի հետ—կարիք չկար նրա ցանկութունները հասկանալու, ինչ-վոր հիմար բանի վրա հաջելու կամ թե չե յետևի վտտների վրա կանգնելու: Կլավասան այդ ամենը կարող էր, բայց միշտ էլ ամաչկոտ ծածկում էր իր գիտեցածը, նա անհարմար էր զգում այդպիսի խոդեր անել, ամաչում էր:

Յերբ նրանք լեռնորդ օրը հանդիպեցին, մտերմանալու առաջին քայլերը Կլավասան արավ: Նա նստեց անմիջապես Անդրոնովի վտտների մոտ, հետո սովորականի պես սկսեցին դիտել գետը: Հանկարծ Կլավասան վնաստաց ու մեկ թաթը վերցրեց դրեց մյուսի տեղը: Նորից վնաստաց և այնպես նայեց Անդրոնովին, վոր կարծեք նրա համար ինչ-վոր անսպասելի բան էր պատրաստել:

Այստեղ ահա Անդրոնովն առաջին անգամ խոսեց շնիկի հետ:— Հը, ի՞նչ ես ուզում, մըթմըթաց նա քթի տակ ու ավելացրեց.— հիմար շուն ես դու, Մուխա:

Այսպես նա մի նոր անուն էլ ստացավ:

Շնիկը կրկին վնաստաց, նորից թաթը թաթի վրա դրեց, հեռվից լավեց շոգենավի սոււոցը:— Այ քեզ լսողութուն, —ասաց Անդրոնովը, —սրան տեսեք:

Բայց այս անգամ էլ նա մենակ գնաց ու շնիկին չկանչեց իր հետ: Կլավասա—Մուխայի սերը դեպի Անդրոնովը այն աստիճանին էր հասել արդեն, վոր միայն նրա կանչին էր սպասում, հետևելու նրան: Շնիկը սիրեց նրան իր ցեղին հատուկ հավատարիմ սիրով:

Անդրոնովը գնաց, իսկ Կլավասա—Մուխան վորոշեց հավատարիմ մնալ նրան՝ չհեռանալ այդտեղից և սպասել

մինչև նրա վերադարձը. նա միայն Կոլխոզ շուկա վազեց՝ գառան վոսկորով նախաճաշելու, հետո վերադարձավ գետափ. հորանջեց ու պառկեց քնելու Անդրոնովի սիրած քարի մոտ: Շնիկը քնեց ամբողջ գիշերը և առավոտը աշխատում էր չարթնանա, վոր ուտելու կարիք չգրա: Քաղցից ամբողջ մարմնով դողում էր, բայց վորոշել էր հավատարիմ լինել—տեղից չհեռանալ, քանի վոր Անդրոնովին իրեն վոչինչ չէր հանձնարարել կատարելու:

Նա շատ էր ուզում քնել և չէր կարողանում, բայց վերջն ստիպված լեղավ քնելու: Հանկարծ նրան արթնացրեց այն ձայնը, վորի համար նա անցյալ որվանից այդքան տանջվել էր:

—Ե՛յ Մուխան, հիմար շնիկ,—ասաց Անդրոնովը,—լեռեկվանից դեռ քնած ես, քեզ ձեծելը դեռ քիչ է:

Նա չհասկացավ, վոր շնիկը նրա սիրուց լեռեկվանից մինչև հիմա դեռ չէր հեռացել այդ տեղից: «Շուշլ շուն է», —մտածեց Անդրոնովը ու նստեց նայելու մարդկանց ու լեռինքին և ել վոչ մի խոսք չասաց շնիկին: Մուխան իրեն վիրավորված զգաց—իրեն չհասկացան... Վախենում էր, վոր իրենց հարաբերութունները վատանան: Նա շատ էր ուզում ընդմիջտ մնալ Անդրոնովի մոտ, բայց չգիտեր՝ ինչպես հասներ իր նպատակին:

Այն ժամանակ վորոշեց ցույց տալ Անդրոնովին, վոր ինքը լավ շուն է, կարող է շատ զվարձալի լինել, շատ հետաքրքիր բաներ անել: Նա վեր թռավ, հաչեց ափի մոտ կանգնած լաստի վրա, սկսեց թռչկոտալով խաղալ քարերի հետ, գոմուաց, մեջքի մազերը ցից-ցից արեց, իսկ և իսկ մեծ շան պես. ապա սողացող բզեզի վրա հարձակման պատրաստվեց, կարծեք առաջնակարգ վորսորդական շուն լինել: Հետո հետևի վոտների վրա կանգնեց, գլխկոնձի արավ, բերանով ինչ-վոր տաշեղի կտոր բերեց, վազեց գետը ու մի քիչ ել լող տվավ:

Անդրոնովն աչքի տակով նայում էր նրան: Նա ար-

դեն հասկացել էր, թե վորքան հետաքրքիր շուն է այդ, բայց չի ուզում ցույց տալ:

Իսկ Մուխան խիստ վողևորված էր—ահա թե ինչեր նա կարող է անել: Համեցեք: Մալտո-գլխկոնձի.—մոտալե՛ ողի մեջ.—համեցեք:

Հոգնելով՝ Մուխան նստեց Անդրոնովի վոտների մոտ. լեղուն կախ գցած, շիթված ու սիրով լի աչքերով նայում էր նրան: Յեվ նորից... Վնգստաց լեռեկվա նման, ու նորից մեկ թաթը վերցրեց, մյուսը դրեց: Գետի մյուս ափին, սարերի հետևից սալերի գումակը լեռեաց...

—Ա՛յ քեզ լողութչուն, —ասաց Անդրոնովը—լավ լողութչուն ունես, հա...

Մուխան նայում էր Անդրոնովի վրա և կարծես ուսումնասիրում էր նրան: —«Ի՛նչ տեսակ մարդ է սա, միթե միայն ձայնից է կազմված, իսկ սրա ձեռքերը, սրա վոտքերն ի՛նչ են»:

Մուխայի համար մարդը կարծես միշտ լեռեք մարդից էր կազմված մարդ-վոտներից, մարդ-ձեռներից ու մարդ-ձայնից:

Կարելի չէ բարեկամ լինել մարդ ձայնի հետ և միևնույն ժամանակ մարդ-վոտներից սոսկալի ձեծ ուտել: Մարդ-ձեռները կարող են քեզ փաղաքշել և նույն միջոցին մարդ-վոտները փորիդ կարող են այնպես հասցնել վոր մարդ ձայնը սրտանց ծիծաղի:

Մուխան ամենից շատ սիրում էր մարդ-ձայնին՝ նրանից վոչ մի անախորժ բան չէր տեսնում,—մեկ-մեկ բղավում է, և ի՛նչ անենք, մեծ բան է: Ա՛յ, մարդ-ձայնը ձեծել չի կարող, Մուխան այդ հաստատ գիտե և այդ նրան շատ հաճելի չէ: Անդրոնովը նրա հետ միայն ձայնի միջոցով էր ծանոթանում, և շնիկին այդ շատ էր դուր գալիս. հետգհետ նա համոզվեց, վոր ձայնն ամենամեծն է-ձեռքերից էլ, վոտքերից էլ, և վոր ամեն բան նրանից է կախված, և լեթե լավ բարեկամանաս ձայնի հետ, այն

ժամանակ ձեռներն ու վոտները չեն համարձակվի քեզ մի վատ բան անել: Ճիշտ է, ձայնը քեզ չերբեք չի կերակրում,—ձեռների բանն է այդ, նրանք են ուտելու բան տալիս, բայց շնիկն ինքն իր համար կարողանում է ուտելիք ճարել: Ինչ վերաբերում է վոտներին, նրանց դերը շատ պարզ է՝ քայլել: Ուր վոտները լինեն, այնտեղ էլ շնիկը կլինի, և վոչ մի թյուրիմացություն չի լեզել: Ուրեմն ամենագլխավորը ձայնն է: Ձայնից են առաջ գալիս թե փաղաքշանք, թե սպառնալիք, թե հրաման, թե ծաղր: Շատ լավ: Յեվ Մուխան սկսեց հետևել Անդրոնովի ձայնին. իսկ նա բարեբախտաբար այնքան քիչ ու դանդաղ էր խոսում, վոր Մուխան շուտով սկսեց հասկանալ Անդրոնովի բոլոր ասածները:

Այժմ շնիկը դեմ չէր Անդրոնովի վոտներին հետ էլ բարեկամություն անելու, և ահա մի անգամ մոտեցավ ու քսվեց Անդրոնովի կոշիկներին, ճիշտ այնպես, ինչպես անում են կեղծավոր կատուները,—այդ նա հաճախ էր տեսել,—հետո լեզ նրա ձեռքը լիզեց:

—Լավ, Մուխան, լավ, բավական է, գնանք, գնանք, —ասաց Անդրոնովը:

Նույն օրը քաղաքում բոլորը զարմացան՝ տեսնելով Մուխային այդ լուռ ու մռայլ պահակագործի հետ միասին: Խիստ զբաղված տեսքով, վարդագուլյն լեզվի կեսը դուրս գցած՝ նա վազում էր Անդրոնովի առաջից, առանց ուշադրություն դարձնելու ծաղրի ու կանչերի վրա:

Անդրոնովն արդեն նրա տերն էր:

2

Մահմանագիծն ընկած էր գետի լերկաչնքով ու ծածկված էր խիտ լեղեգնուտներով:

Մահմանապահներն ապրում էլին խրճիթներում՝ լեղեգնուտների մեջ, վորոնք այնպես էլին ծածկում այդ

բնակարանները, վոր նույն իսկ ցերեկը մարդու աչքին վոչինչ չէր յերևում: Ահա այստեղից, այս խոտակալած ու թփերով ծածկված լեղեգնուտների միջից գիշերները քամին բերում ու տարածում էր ողի մեջ զանազան անհասկանալի ձայներ—շուկներ, մլավոց, ծվոց և շատ անծանոթ հոտեր: Մուխան չէր կարողանում հասկանալ՝ լավ նշան են դրանք, թե վատ, բարի լեն, թե չար. և այդ բոլորից շատ էր վախենում:

Ամեն առավոտ Անդրոնովը Մուխային իր հետ տանում էր լեղեգնուտ: Անդրոնովը քայլում էր շատ դանդաղ, հրացանը ուսին գցած:

Մուխան մտաբերում էր իրեն վախեցնող գիշերվա շուկներն ու վազում էր նրանց հետքերով:

Այ, այստեղից լեղեկ կատվի մլավոց էր լսվում. այն, դրա համար էլ կատվի հոտ է գալիս: Հա, այստեղից էլ թռչունի հոտ է գալիս. այ, հետաքրքիր է, ուրեմն նա լեղ ծվվում: Դե, իհարկե, հասկանալի լեն: Իսկ աչք, աչք ինչ հոտ է, զարմանալի լեն, շատ զարմանալի: Իսկ այս ինչ հետքեր են: Հանկարծ Անդրոնովը նշան է անում՝ «Սըսս... հանդարտ»:

Մուխան կծկվում է գնդակի պես. նրա թաթիկներն այնպես անձայն էլին շարժվում, կարծեք լող ելին տալիս:—Սըսս...

Նրանցից վոչ հեռու խշխշացին լեղեգները. մարդ էր անցնողը: Անդրոնովը և Մուխան պտույտ էլին անում, անցնում նրա հետևը, ճանապարհը կտրում, առաջ ընկնում:—«Հետևիր նրան, Մուխան,—ասում էլին Անդրոնովի աչքերը,—բաց մի թողնի, իսկույն, պատրաստվիր: Ահա: Սպասիր: Դե բռնիր»:

Բայց Մուխան հետքերի հոտից իմանում էր արդեն, վոր անցնողը ծանոթ մարդ է, իրենց սահմանապահներիցն է: Մուխան կամացուկ մոտենում էր նրան և հանկարծ... Ա՛խ, հաջոցով ու անտանելի վնգստոցով հարձակ-

վում էր ու ընկնում ուղիղ զինվորի վտաքերի տակ: Մահմանապահը վախեցած մի կողմ էր թռչում: Իսկ շնիկն ուրախ-ուրախ թռչկոտում ու վնգստում էր. նրան շատ էր դուր գալիս այդ ձևով վախեցնել մարզկանց, և այս տեսակի զբոսանքները դարձան նրա սիրելի ժամանցը: Շուտով նա ընտելացավ լեղեգնուտներին, սովորեց ապրել նրանց մեջ և ամեն բան այնտեղ տեսնել ու իմանալ:

Հետո Անդրոնովը շնիկին իր հետ ձիով ման գալ սովորեցրեց: Թամբի առջևն ամրացնում էր դատարկ պայուսակը, Մուխան նստում էր այդ պայուսակի մեջ, հետևի վոտների վրա: Ինչպես էր հաջում նա այդ ժամանակ, հաջում աշխարհով մեկ, խիստ դժգոհում էր ու պոչն անընդհատ շարժում պայուսակի մեջ:

Մեկ անգամ Անդրոնովն ու Մուխան իրենց շեկ-կարմիր ձիով դուրս լեկան գիշերային շրջադաշուլթյան:

Գիշեր էր. հանդարտ ու խաղաղ գիշեր: Հենց վոր նրանք մտան լեղեգնուտները, Անդրոնովը դուրս բերեց Մուխային պայուսակից, կռացավ ու գրեց նրան գետնի վրա:

—Ման արի, Մուխան, —ասաց նա շուկով, —այ, այստեղ, այստեղ վորոնիր: Շնտ... Սըսս...

Մուխան այնքան փոքրիկ էր, վոր չէր Անդրոնովը նրան գրեց գետին և ուղղվեց թամբի վրա, այլևս չկարողացավ շնիկին տեսնել: Բայց նա գիտեր, վոր Մուխան շատ մոտ է, համարյա ձիու սմբակների մոտ, վորովհետև ձին մեկ քայլն առաջ էր դնում, մեկ էլ հանկարծ կանգ առնում: Յերևի ձին հետևում էր Մուխային, վոր հանկարծ նրա թաթերը չտրորեր: Այդպես էլ առաջ ելին գնում արագ-դանդաղ, արագ-դանդաղ: Մեկ էլ հանկարծ կանգ առան...

Ինչ պատահեց: Անդրոնովը կռացավ թամբի վրայից մինչև գետին: Հը, սով կա այդտեղ, Մուխան:

Մուխան նույնիսկ չնայեց նրան. նա կանգնած էր

ձգված մկաններով ու դողում էր ամբողջ մարմնով, իսկ սովորաբար կախ ընկած պոչը փայտացել վերև էր ցցվել:

«Ինչ հիմար շուն է, —մտածեց Անդրոնովը, —ամեն բանից վախենում է», —և մտրակի ծայրով խփեց շանը: Դե: Տեղից չշարժվեց:

«Ինչ կարող է լինել», —մտածեց Անդրոնովը և սկսեց ականջ դնել: Բավական լերկար ժամանակ նա վոչինչ չկարողացավ վորոշել, բայց ահա ավելի շուտ հասկացավ, քան թե լսեց, —առջևում, լեղեգնուտների մեջ, ինչ-վոր մի բան շարժվեց:

«Տհե, բանը վատ է», —մտածեց Անդրոնովը, —«սով գիտե՞ սն էմ հանդիպել», ու զգուշորեն ուսից ցած բերեց հրացանը:

—Տ՛յ, գնրս լեկ, —լավեց մի ձայն լեղեգնուտների միջից (խոսում էր ոտար լեղվով). և նույն միջոցին լավեց նաև հրացանի ձայնը: Գնդակը վզգալով անցավ Անդրոնովի ուսի վրայից: —Մ՛յ, սն, սն... Հուսահատ վնգստաց խիստ վախեցած Մուխան, վոռնաց, ընկավ գետին ու փորի վրա սողալով մտավ լեղեգնուտները:

Անդրոնովը նշան արավ, կամաց չրխկացրեց:

Բայց լեղապատառ Մուխան չլսեց նրա կանչը:

—Վոչինչ չկա, շուն էր, —լավեց նույն ոտար ձայնը լեղեգնուտների միջից. —իզուր տեղը կրակեցիր, մարզկանց արթնացրիր:

—Ո՞վ գիտեր, թե շուն է, —վրա բերեց մի ուրիշ ձայն, —կարող էր և մարդ լինել:

Անդրոնովն ամուր սեղմեց ձիու սանձը: Ամենաթեթև շուկը, կամ ձիու շնչառությունը, ասպանդակի ձայնը, կամ սմբակի թմփոցը, կարող ելին նրան մատնել:

«Բայց ինչ ժամանակին վնգստաց...» Մտածեց Անդրոնովը Մուխայի մասին, —փրկեց ինձ... Իսկ ինքն ո՞ւր է, վճրտեղ է պահվել... Հիմա լես ինչպես գտնեմ նրան:

Նորից ձայներ լավեցին լեղեգնուտների միջից:

—«Արի մերոնց արթնացնենք, —ասաց մի ձայն:—Շուտով կլուսանա, մերոնք գետն արդեն անցած կլինեն»:

—«Վոչ, շուտ ե գետ, անցած չեն լինի», —պատասխանեց մի ուրիշ ձայն:

Յե՛վ ձայներն սկսեցին մեկը մյուսի հետ վիճել—անցած կլինեն նրանք, թե վոչ, ժամանակը չի՞ արդո՞ւք վերագաճնալու գետի մյուս ափը: Այդ խոսակցությունից Անդրոնովը հասկացավ, վոր լեղեգնուտների մեջ թագնը վաճները մաքսանենգների պահպաններ են և հսկում են իրենց այն գլխավոր խմբին, վորն ապրանքը պիտի անցկացնի գետի մյուս ափը: Անդրոնովն հասկացավ և այն, վոր անհրաժեշտ ե շտապ կերպով իմաց տալ պահակատեղին, վորպեսզի կարողանան անմիջապես հասնել ու բռնել մաքսանենգների գլխավոր խումբը:

«Ե՛հ, Մուխան, գրողի տարած, մտածեց Անդրոնովը. —ինչ անհասկացող շուն ե. ուրիշ շուն լիներ նրա տեղը, հիմա կհարձակվեր այս մարդկանց վրա, կվախեցներ իրենց ել, ձիերին ել, իսկ ինձ հնարավորութուն կտար փախչելու»:

Կամաց, շատ կամաց, շունչը պահած՝ Անդրոնովը կուացավ թամբի վրայից, վոր տեսներ՝ վնասեղ ե թագնը ված Մուխան. բայց շատ մոլթն եր, և նա վոչինչ չտեսավ:

«Կովի բռնվել սրանց հետ, —շարունակում եր մտածել Անդրոնովը, —անմտութուն կլինի: Կարևորն այստեղ թագնված մարդիկը չեն, այլ մաքսանենգների այն գլխավոր խումբը, վոր, ինչպես ասացին, ապրանք ե անցկացնում: Սակայն ինչպես փախչեմ, վոր չտեսնեն ու չխփեն հետևից: Անպայման կխփեն»:

Բայց ուրիշ լե՞ք չկար. հո չի՞ կարելի մինչև լույս այստեղ արձանի պես կանգնած մնալ... —Ինչ լինում ե՞ թող լինի: Վորոշեց շուտ տալ ձիու գլուխը և քշել՝ թե՛ կուզ գնդակների տարավի տակ:

Ո՞վ գիտի, գուցե և անվտանգ տեղ կհասնեմ, —մտածեց Անդրոնովը, —անմիջապես կպատմեմ, թե բանն ինչ ե, և իսկուհն այդ գլխավոր խմբի հետևից կընկնեն:

Հենց այդ վայրկյանին Մուխան հանկարծ վնգստաց, վախից փակեց աչքերը, դուրս թռավ լեղեգնուտներից ու հարձակվեց ուղիղ մաքսանենգ-հսկիչների վրա:

—Կրակիր. կաց. սպասիր:

—Ինչ պատահեց, գրողը տանի: Ինչ-վոր ծանր բան զրնգաց ու ընկավ լեղեգների մեջ:

Անդրոնովը խփեց ձիուն, շուտ տվեց նրա գլուխը և սլացավ դեպի իրենց ուղեկալութունը: Նրա հետևից քիչ հետո մի քանի անգամ կրակեցին, բարձր աղմկեցին ու լռեցին: Ա՛յ լավ շուն», —միայն հիմա մտածեց Անդրոնովը, —ինչպես սովորեցրել ելի, այնպես ել արեց: Նա, շրթունքները միացնելով, սուլեց ու կանչեց՝ «Մուխան Մուխան. նա կուանում եր թամբից և աչքերով վորոնում շուրջը»:

—Ա՛յ, լավ շուն, —մըթմըթում եր նա ինքն իրեն և շտապեցնում ձիուն, վոր հասնի ուղեկալութուն, քանի ուշ չի՞ մաքսանենգների գլխավոր խումբը բռնեն:

Իսկ Մուխան, հարձակվելով լեղեգնուտների մեջ պահված մեկի վրա, սրա վրայից գլորվեց գետին՝ մեկ ուրիշի վոտքերի տակ, թաթերով ճանգուտեց նրա կողքին քնած մի ուրիշի լեռնը և անհայտացավ լեղեգնուտների մեջ: Սաստիկ վախից հազիվ կարողանում եր վազել, ականջները զժժում ելին, աչքերի առջև կարմիր շրջաններ ելին չերևում, հոտառութունը կանգ եր առել. բայց շեկ—կարմիր ձիու հետքերի թողած հոտն այնքան ծանոթ եր նրան, վոր նա ճանապարհը կորցնելուց չեր վախենում: Նա չգիտեր՝ ինչ անի այս սոսկալի լեղեգնուտների մեջ, այս նույնքան սոսկալի, անծանոթ, նոր մարդկանց հետ... Ու վազում եր, վազում առանց շնչելու, առանց տեսնելու, առանց լսելու... միայն թե հասներ ձիուն, հասներ

նրան՝ Անդրանուկին, և ան ամեն բան կասեր՝ ինչպիսի
հարկավոր եր:

Նա չէր տեսնում, վոր դիմացը, վոչ աջնքան հեռու,
չերևում ելին արդեն ուղեկալուծյան լուսերը, չէր լսում
աջնտեղից լեկող հեծելազորի ազմուկը նրանք շտապու
ելին այն ճանապարհով, վոր տանում եր դեպի գետը:

Յեթե նա կանգ առնէր ու մի քիչ հանգստանար,
գուցե և հասնէր ավանջին Անդրանուկի հազիվ լսելի ձայնը՝
«Մուխա, Մուխա»: Բայց նա չէր կարող կանգնել, չեթե
նույն իսկ ցանկանար: Նրա վոտքերը սլանում ելին իրենք
-իրենց, աչքերը ճահատն ելին թռել սիրան ալևա չկար,
կարծեք կորել եր նրա նիհար կրծքում. և շնչասպառ,
առանց վորեւե բան տեսնելու, նա ամբողջ թափով կպավ
ճանապարհի վրա ընկած մի փոքր քարի, վորը հազիվ
եր հողից բարձրացած, պտույտ լեկավ ոգի մեջ, թափա-
հարեց թաթիկները և ընկավ անշնչացած ու կարծես
ձգնում եր թափել վերջին ջանքերը՝ վեր կենալ ու շա-
րունակել վազել, վազել...

Այդտեղ՝ իր խրճիթից վոչ շատ հեռու, գտավ նրան
Անդրանուկը, չերբ առավոտյան վերադառնում եր մաք-
սանենգների վրա կատարած հաջող հարձակումից:



«Ազգային գրադարան»



NL0383867

4706

ԳՐԵԸ 35 Կ.

П. ПАВЛЕНКО
МУХА
ГИЗ ССРА ЭРИВАНЬ